

## ԱՐԱԿԵՆ ՆԱՆՅԱՆ

Գեորգյան Հոգեւոր Ծննդարանի 2 լսարանի սան

# ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՎԱՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դավանաբանական այս կետը իր որոշակի՝ եւ ուրույն տեղն է գրավում ընդհանուր դավանաբանության համակարգում: Անշուշտ այն իր բարդությամբ զիջում է Սուրբ Երրորդության եւ քրիստոսաբանական դոգմաներին, սակայն, այդուհանդերձ, կարելի է այնքանով, որ առանց դրա հստակ պատկերացման, առանց համապատասխան ընկալման վերլուծության, առանց հայրաբանական եւ ավելի ուշ շրջանների գրողների՝ խնդրո առարկայի առնչությամբ իրենց արտահայտած մտքերին ու մտեցնմանը ծանոթանալու, հնարավոր չէ մուտք գործել աստվածաբանական բոլոր այն հարցերի ոլորտները, որտեղ խոսքը, այսպես թե այնպես, վերաբերում է Սուրբ Երրորդությանը:

Իրապես, խորամուխ լինելով Հոր, Որդու եւ կամ Սուրբ Հոգու Անձերի շուրջ ծագած աստվածաբանական վեճերի մեջ, հաճախ նկատում ենք, որ դրանք ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են Երրորդության Անձերի հատկությունների հետ, էլ չենք նշում ոչ պակաս թվով այն դեպքերը, երբ քանավեճերի բուն պատճառը եղել է հենց ընկճվող այս հարցը:

Սույն հարցի ուսումնասիրությունը կարելի է նաեւ նրանով, որ ոչ բոլոր Եկեղեցիներն ունեն այս խնդրի նույնական աստվածաբանական ընկալումը: Խոսքը կաթոլիկ աստվածաբանական ավանդության մասին է, որը, հակառակ հռոմեադավան աստվածաբանների բազմահատոր ուսումնասիրությունների եւ աշխատությունների, այնուամենայնիվ հստակ կերպով չի սահմանազատում ու որոշակիացնում Հոր միեւրոպայության ու միապետության [*«единоначалие»*, *«монархия»*, *«monarchy»*] դոգման Երրորդության անձերի դոգմայից, որի դեպքում տրամաբանորեն եւ մեխանիկորեն կրպակվեր, *«Filioque»*-ի տեսությունը<sup>1</sup>, որը խորթ է հայ աստվածաբանական մտքին:

Հաշվի առնելով բոլոր այն բարդություններն ու դավանաբանական շեղումները, որոնք ի հայտ էին գալիս առանձնավորական հատկությունների շփոթության հետեւանքով, Եկեղեցու հայրերն ի սկզբանե իսկ որդեգրեցին խիստ դիրքորոշում թե՛ նման սայթաքումների եւ թե՛ սայթաքողների նկատմամբ: Երեսուկայեցեք, թե ինչպիսին կլինեք Եկեղեցու վերաբերմունքը մեկի նկատմամբ, որը Հոր փոխարեն Սուրբ Հոգուն վերագրեք անսկիզբությունը եւ կամ Որդուն համարեք Հոր պատճառը եւ այլն:

Խնդրո առարկա հարցն ունեցել է երկար ու դժվարին պատմական զարգացում, բայց եւ հարկ է նկատել, որ առանձնավորական հատկությունների վարդապետությունը, որպես այդպիսին, իր գոյությունն առնում ու բխում է Սուրբ Երրորդության համագոյության վարդապետությունից: Սկզբնապես Եկեղեցու հայրերը այն անվանեցին *«Προσώπων γυναικεὶς ἰδιότητες»*:

Անտարկելիորեն ընդունելով, որ Սուրբ Երրորդության երեք Անձերի՝ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու միջեւ չկա ոչ մի էութենական տարբերություն, որը որեւիցե կերպով ազդեր նրանց վրա, միեւրույն ժամանակ դավանում ենք, որ գոյություն

<sup>1</sup> Протоиерей Михаил Помозанский, «ТРАВОСЛАВНОЕ ДОГМАТИЧЕСКОЕ БОГОСЛОВИЕ» [в сжатом изложении], Новосибирск, 1993, стр. 49.

ունեն անհամեմատորակա՝ եատկություններ, որոնք տարբեր են միմյանցից և պատկանում են Սուրբ Երրորդության տարբեր Անձերին: Ընդհանրապես, էութենական մակարդակի վրա Երրորդության որևէ Անձին տրվող մակդիրը լիիրավորեն կարող է տրվել մահւ մնացյալ երկու Անձերին, քանզի այն, ինչ հատուկ է մեկի էությանը, հատուկ է նաև մյուսներին, քանի որ Նրանք մույն էությունն ունեն: Սակայն պետք է տարբերակել Սուրբ Երրորդությանը և նրա անդամներից յուրաքանչյուրին առանձին-առանձին տրվող ստորոգելիական [ատրիբուտական] մակդիրը, հատկություններին վերաբերող եզրերից: Այսպես, «ճշմարտությունը» հատուկ է Սուրբ Երրորդության երեք Անձերին<sup>2</sup>, ինչպես նաև մի շարք մակդիրներ, գործիքնակ՝ «արդար», «զովեալ», «փառատրեալ», «սուրբ», «ամենօրինեալ», «բարեբար», «եզոր», «սեւաւոր» և այլն:

Հատկություններն իրենց տեսակի մեջ բաժանվում են 2 խմբի.

Ա. էական հատկություններ են՝ *օստանդ լնձմառա, proprietates essentielles*

Սրանք եւս իրենց հերթին վերաբերում են եւ՝ Հորը, եւ՝ Որդուն, եւ՝ Սուրբ Հոգուն:

Դրանք են՝

1. Անսահմանություն կամ ամենակատարություն,
2. Ինքնագոյություն,
3. Անկախություն,
4. Անպարագրելիություն ու ամենուրեքություն,
5. Հավիտենություն,
6. Անփոփոխելիություն,
7. Ամենակարողություն:

Բ. առանձնավորական հատկություններ են՝ *որոսատառ լնձմառա, proprietates personales*

Ա. Այսպիսով, Եկեղեցին սովորեցնում է, որ թեև Հոր, Որդու և Սուրբ Հոգու էությունը մույնն ու մեկն է, Հայրը միշտ Հայր է և ոչ երբեք Որդի կամ էլ Սուրբ Հոգի, Որդին միշտ Որդի է և ոչ երբեք Հայր կամ էլ Սուրբ Հոգի, և մանապես Սուրբ Հոգին միշտ Սուրբ Հոգի է և ոչ թե Հայր կամ էլ Որդի<sup>3</sup>:

Բ. Հորը հատուկ է հայրությունը, Որդուն՝ որդիությունը, Սուրբ Հոգուն՝ ինդղությունը: Սրանք եւս անշփոթելի են<sup>4</sup>:

Ը. Սուրբ Երրորդության Անձերի տարբերությունները չեն սահմանափակվում միայն վերոհիշյալներով և Նրանք աստվածային հայտնության բացահայտման հերթականությամբ, այլ առանձնավորական այն հատկություններով, որոնք բացառապես վերաբերում ու պատկանում են Երրորդության Անձերից կոնկրետ որևէ մեկին, օրինակ՝ միայն Հորը, Որդուն կամ էլ Սուրբ Հոգուն:

Այս հարցի վրա առանձնակի ուշադրություն դարձվեց հատկապես 4-րդ դարում, երբ քրիստոնեական աստվածաբանության առջիկ ծառացել էր աստվածային միության ու տարբերության արտահայտման գերխնդիրը<sup>5</sup>: Այս ժամանա-

<sup>2</sup> Տե՛ս «ԿՆԻԷ ՀԱՄԱՑՈՅ» [=Կ. Հ.], Ս. Էջմիածին, 1914, էջ 26. «Թէ Հայր և միայն ճշմարիտ Աստուած է. Միածինն և միայն ճշմարիտ ... և միայն Սուրբ Հոգին Աստուած ճշմարիտ»:

<sup>3</sup> Տե՛ս «Ս. ԱՐԵՋՍԱՆԴՐՈՒՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՃԱՌԷ, ԹՈՒՂԹԷ ԵՒ ԸՆԴՐԻՍՄԱՍԱՅՈՒԹԻՒՆ», «Յաղագս մարմնատուրեան Որդւոյն և Սրբոյ Երրորդութեան», Վենետիկ, 1899, էջ 113. «Որպէս ոչ երբեք է Հայր Որդի, այսպէս ոչ եղիցի և Որդի Հայր և որպէս ոչ դադարէ Որդի՝ միայն գոյ Որդի, քանզի մոլորութիւն, ապա է միայն և մտաւ ածել զայս և ասել առ Որդւով եղբայր, կամ առ Հայր և գՀոգւոյն անուն»:

<sup>4</sup> Վարդան Այգեկցի, «ԳԻՐԷ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՄԱՏ ՀԱՄԱՑՈՅ», Երեւան, 1998, էջ 76-77. «գի որ ինչ Հայր և Որդւոյ է՝ Հոգւոյ է, քաց ի հայրութենէն և յորդիութենէն, և ամենայն որ ինչ Հոգւոյ և Հայր է՝ Որդւոյ է, քաց ի հայրութենէն և յերդիութենէն և ամենայն որ ինչ Որդւոյ և Հոգւոյ է՝ Հայր է, քաց յորդիութենէն և յերդիութենէն»:

<sup>5</sup> В. Н. Лосскыя, "ДОГМАТИЧЕСКОЕ БОГОСЛОВІЕ", Москва, 1991, стр. 212.

կաշքջանում ապրող եւ գործող Եկեղեցու նշանավոր հայր Գրիգոր Նյուսացին իր «Յերրորդութիւնն» ճառում գրում է. «Ձի կարգատրապէս ցուցանի Սրբոյ Երրորդութեան բնութիւնն՝ ոչ խառնակեալ յիրաքանչիւր գոյութեանց առանձնաբար երեւելոյ նոցա յատկութիւնն»<sup>6</sup>: Իսկ Գրիգոր Աստվածաբանը իբրեւ պարտադիր հանգամանք նշում է, որ միաստվածությունը պահելով «պարտ է» այն եռադեմ խոստովանել, այսինքն՝ երեք գոյացությունները «իրաքանչիւրովը հանդերձ յատկութեամբն»<sup>7</sup>: Առանձնավորական հատկություններին մասնավորաբար անդրադարձել են նաեւ Հայ Եկեղեցու հայրերը: Մամբրե Վերծանողը գրում է. «Իսկ յատկութիւնն յիրաքանչիւր յերեսս քաժանին եւ ի դէմս»<sup>8</sup>: Խոսքովիկ Թարգմանիչը, խոսելով մեկ բնության ու աստվածության գործության խոստովանության մասին, ասում է. «ոչ կասկածեմք» մեկ բնության մեջ տարբերակել «գառանձնատրական յատկութիւնն»<sup>9</sup>: Նույն գաղափարն է արտահայտվում նաեւ Գրիգոր Նարեկացու անունով մեզ հասած դավանաբանական բնույթի մի գործում, ուր հեղինակը, անդրադառնալով Սուրբ Երրորդությանը, ասում է, որ Նրանում չկա ոչ առավելություն, ոչ նվազություն, այլ բոլորը համահավասար են, «քաց յանձնատրութեանցն յատկութեանց, եւ որ նոցին հետեւի»<sup>10</sup>:

1. Միավասիկ Հայր Աստծո առանձնավորական հատկությունները, որոնց համաձայն Նա ճանաչվում է որպէս՝

ա. Անձին - *ἀνένητος, ingenuus, non natus, не рождённый*<sup>11</sup>

բ. Անսկիզբ - *ἀσπαρχος, principii expers, principio carens, незначущий*<sup>12</sup>

<sup>6</sup> Կ. Հ. էջ 24:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>8</sup> Տես՝ «ԿՈՐԻՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՄԱՄԲՐԵԻ ՎԵՐԾԱՆՈՂԻ ԵՒ ԴԱՎԹԻ ԱՆՀԱՂԹԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ»-ը, Վեներիկ, 1833, էջ 70, ճառ «ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՂԱԶԱՐՈՒ ԶԱՒՈՒՐ ԸԱՐԱԹՈՒՆ»:

<sup>9</sup> «ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ», Վարդաշապատ, 1903, Գլուխ Ա, էջ 32:

<sup>10</sup> Տես՝ «ՃԱՆՔ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՐՈՒԹԻՒՆ ԷԼԻԱՏՈՅ ԱՐԱՐԵԱՆ ՍՐԲՈՑ ՀԱՐՑ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ ԵՒ ՎԱՀՐԱՄԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ», յերուսաղեմ, 1856, էջ 5, «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅՈՋՆԵՐԱՆԵԱՆ ՄԵԾԱՆՈՐԻ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ ՀԱՄԱՌՈՏԻՔ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ԷԼԻԱՏՈՅ ԵՒ ՄԱԶՈՒՐ ՎԱՐՈՒՅ ՄՈՒԼԵՒՈՒԹԵԱՆ Ի ԽՆԴՐՈՅ ՆՈՐԻՆ. ՀԱՐԱԶԱՏԻ ՎԱՐԴԱՄԱՑ ԴԻՒՄՆԱՂՈՐԻ»:

<sup>11</sup> Տես Կնիք Հաւատոյ, Հիպոդիտոս Բոստրացի, «Քայց զի պայման գոյութեան նորա այլիայլ է եւ այն չէ ծածկեալ յիմաստնոցն, այնու, զի Հայր չծնեալ եւ ծնալ է, եւ Որդի չծնալ եւ ծնունդ է, եւ Հոգի ոչ ծնալ եւ ոչ ծնունդ: այլ ելալ...», էջ 8: Դամաս Եպիսկոպոս Հռովմայեցի, «Հայր անձին եւ ծնալ զՈրդի, Որդի ծնունդ է եւ անձին, Հոգի ելալ է եւ դարարումն ի Հորէ առ Որդի», էջ 25-26: Գրիգոր Լուսավորիչ, «Այսպէս եւ Հայր անձին իսկությամբ, անսկիզբ էությամբ...», էջ 21:

<sup>12</sup> Տես Կնիք Հաւատոյ, Գրիգոր Աստվածաբան, «Իսկ գառանձնատրութիւնն Հայր՝ անսկզբնատրութիւնն, սկիզբն իմացեալ եւ ասացեալ, քայց սկիզբն իբրեւ պատճառ եւ գաղղբուր եւ զնշմանմատր լոյսն», էջ 38-39: Յովեան Մայրազոմեցի, «Այսպէս հաւատամք Սուրբ Երրորդութիւնն, խոստովանելով զմիայն Հայր Աստուած՝ զինքնագոյն յերեսան, գէական անսկզբնատր», էջ 55:

Այստեղ անհրաժեշտ է մասնավոր կերպով անդրադառնալ այն երեսութիւն, որ շատ հաճախ հայրերի գործերում կարելի է հանդիպել «անսկիզբ» եզրը՝ գործածված Որդու առնչությամբ, որն առաջին հայացքից կարող է սխալ թվալ: Օրինակ՝ Եպիփան Կիպրացին, խոսելով Որդու մասին, օգտագործում է «զոմոտեզմ» եզրը [Կ. Հ. էջ 27], իսկ Պրոկոն իր թղթում, հաստատելով Քրիստոսի աստվածությունը, գրում է. «Այլ Աստուած յԱստուծոյ, Բան մշտնջենաւորակեմ, Որդին Միածին՝ անսկզբնական» [Կ. Հ. էջ 108]: Սա, սակայն, ամենեւին չպետք է շփոթեցնի մեզ, քանի որ մշտապէս պետք է հիշենք, որ այն, ինչ կատարվել է ու կատարվում է Սուրբ Երրորդության անբաժանելի սահմաններից մերս «ի վեր է քան զամենայն միտս եւ գրանոս», այնպէս որ մարդկային ոչ մի սպեկուլատիվ, եւ ոչ էլ դեդուկտիվ մտածողություն չի վիճակի չէ ընկալելու այդ անճառելի խորհուրդները: Հետեւաբար մեր հասկացած սկիզբը ոչ մի կապ չունի աստվածային սկզբի հետ:

գ. Անպատճառ *αὐτὸς τὸς, non causa, non habens causam, безпричинно*<sup>13</sup>

Հայր Աստծուն՝ Որդու և Սուրբ Հոգու համեմատական, հարաբերությամբ անվանում են՝

ա. Սկիզբ - *ἀρχή, principium, начало*

բ. Պատճառ - *αἰτία, а, causa, причина*<sup>14</sup>

Հորը՝ Որդու համոզեալ ունեցած իր միակ ու անփոխարինելի հարաբերությունից անվանում են՝

ա. Հայր - *Πατήρ, Pater, Отец*

իսկ Սուրբ Հոգու համոզեալ ունեցած իր հարաբերությունից՝

բ. Բխող - *Προβαλεῖς, Изводителе, Отрыгатель*<sup>15</sup>

2. Որդի Աստծո առանձնավորական հատկությունն է .

ա. Ծնելությունը - *γένεσις, generatio, рождение*<sup>16</sup>

3. Սուրբ Հոգի Աստծո առանձնավորական հատկությունն է.

ա. Բխողություն = Ելողություն<sup>17</sup> - *ἐκπορευσις, ἐκπόρευμα, processio,*

*исхождение*<sup>18</sup>

Եկեղեցու հայրերը, քաջատեղյակ լինելով այդ իրողությանը, միեմույն ժամանակ աշխատել են ներկայացնել այն մախաղոյալը, որի հիման վրա նրանք օգտագործել են այդ եզրը և կամ էլ լուսաբանել, քե իրենք առհասարակ ի՞նչ են հասկանում տվյալ եզրը կոնկրետ համատեքստում գործածելով: Եպիփան Կիպրացին, իբրեւ աքսիոմային դրույք, հաստատում է, որ Որդին «ոչ սկսեալն ի յելմ»: Գրիգոր Աստվածաբանը Հոր անսկզբության կողքին չի համարձակվում խոսել Որդու անսկիզբ լինելու մասին. Որդին «ոչ ամսկիզբն, վասն զի ի Հայրէ», սակայն մա իր պարտքն է համարում մշելու, որ եթե սկիզբն ու անսկիզբությունը դիտվում են ժամանակի տեսանկյունից, ապա շարունակելն արդեն անհիմատ է, որովհետեւ Որդին՝ ժամանակի արարիչը լինելով, դուրս է և ենթակա չէ ժամանակին:

Այս հարցի լուծման բավականին հետաքրքիր տարրերակ է առաջարկում Եզնիկ Կողբացին: Նրա աստվածաբանական համակարգում եթե Հայրը «ամսկիզբ» ու «արարիչ» է, ապա Որդին ու Սուրբ Հոգին «ամսկզբակից» ու «արարչակից»-ներ են:

Անսկիզբությանը վերաբերող այս հանգամանքը ամբողջովին գործում է մանւ անպատճառության պարզապիսի:

13 Տես Կ. Հ. Գրիգոր Նյուսացի. «Առանձին է Հայր՝ ոչ ի պատճառէ գոլ», էջ 24-25: Եզնիկ Կողբացի. «Մի Աստուած խոստովանիմք՝ յանդիմանութիւն քաղմանում չաստանոցն, ինքնակայ, *անպարճառ*, պարզական...», էջ 51:

14 Հայրն ինքը, անպատճառ լինելով, միեմույն ժամանակ պատճառ է, ինչպես և անսկիզբ լինելով սկիզբ է Որդու և Սուրբ Հոգու համար: Այսպիսով, Հայրն է Որդու և Սուրբ Հոգու լիարժեք պատճառը, իսկ Որդին ու Սուրբ Հոգին պատճառից «ամօժամանակաբար և առանց պատճառի» [«ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹԵ ՄԱՆՎԵԼ ԿՈՄԵՆԵՆՈՍԻՆ», «Էջմիածին» Բ, 1969, էջ 42]: Հայրն է միակ պատճառը, գրում է Կոստանդին կաթողիկոսը Հեթում քաղաքի ռուդված իր քրթում «միայն ծննդեամբ և միայն ելողութեամբ» [«ԳԻՐԸ ԹՂԹՈՒՅ» (= Գ. Թ.), Թիֆլիս, 1901, էջ 504]:

15 «ИСПОВЕДАНИЕ ХРИСТИАНСКОЙ ВЕРЫ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ», Иосиф архиепископ Аргунянский-Долгорукий, Санкт-Петербург, 1799, стр. 28.

16 Ամանիա Նարեկացի, «ԳԻՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ», Վաղարշապատ, 1892, էջ 6. «Հաւատամք ... և ի մի Տէր Յիսուս Զրիստոս, Որդին Աստուծոյ՝ *ծնեալ* և ոչ արարեալ»: Պարույր Մորադյան, «ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՀԻՆ ՎՐԱՅԵՐԵՆ ԽՍՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Երեւան, 1982, «ԲԱՆ ՍՈՒՐԲ ՀԻՊՈԴՈՒՅԵՍԻՒՄ՝ ՎԱՆՆ ՀԱՎԱՏՈՒ», «1.2 Հավատում ենք ու խոստովանում ... Որդուն՝ *ծնված* լուստ Հորից»: «Հաւատամք գԲանն Աստուած անեղ *ծնեալ* ի Հօրէ մախքան գիալիտեանս», «ՄԱՇՏՈՑ ՁԵՆԱՄԴՐՈՒԹԵԱՆ», Ամբիփաս, 1958, էջ 32:

17 «ԸՆԴՀԱՆՐԱՊԱՆ ԹՈՒՂԹԸ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ԸՆՈՐՀԱՄՈՅ», յերուսաղէմ, 1871, էջ 184. «Հաւատամք ի Սուրբ Հոգին՝ որ գամեալն քննէ և զխորս Աստուծոյ, որ քղխտ առ ի Հօրէ...»: «ՄԱՇՈՑ», Վաղարշապատ, 1872, «ԱՂՕԹԸ ՍՐԲՈՅՆ ՅՕՀԱՆՆՈՒՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՍՍՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ», էջ 461. «Որ եսղ Տէր գորութեանց Աստուած ճշմարիտ աղբիւր լուսոյ և կենաց *քղխեալ* անքնմաբար ի Հօրէ»: Տես Գ. Թ. էջ 191, Արրաեան կաթողիկոս. «Հաւատամ ... և ի Սուրբ Հոգին, արարիչ և

\*\*\*

Մակայն, հակառուկ էկեղեցու աստվածաբանական ավանդության՝ քննարկվող խնդրի հստակ ըմբռնմանը, հայրաբանական եւ ավելի ուշ շրջանների դավանաբանական գործերը ըննելիս, բախվում ենք բավականին հակասական քննադատի մի երեսույթի, այն է՝ Եկեղեցու հայրերը հաճախ առանց անհրաժեշտ քննադատության եւ վերաբերվում առանձնավորական հատկություններն արտահայտող եզրերի հետ: Անշուշտ, գործը չի հասնում ենովմեակամությանը, բայց առաջանում է մի խնդիր, որը մեկնաբանության կարիք է զգում:

Վերադառնալով հիմնահարցի պատճառները երկուսն են. Ա. Եզրերի մանգորինակ «շփոթում» նկատվում է մառի Աստվածաշունչ մատյանում: Այն Հորը երբեմն Հոգի է անվանում. «Հոգի է Աստուած» [Յովհ. Դ 24], Որդուն Հայր է կոչում. «Ձի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որդի իշխանութիւն եւ եղի ի վերայ ոսոց իւրոց, եւ անուն կոչեցաւ մեա Հրեշաակ մեծի խորհրդով, Սքանչելի, խորհրդակից, Աստուած Հօր, Իշխան, Հայր հանդերձելոյ աշխարհի» [Եսայի Թ 6]: Երբեմն Որդուն Սուրբ Հոգուց ծնված է համարում. «Եւ մեզի որ ի մայն ծնեալ է ի Հոգայն Սրբոյ է» [Մատթ. Ա 21]: Ինչպես մառի քննում եզրն են օգտագործում Որդու առնչությամբ. «Բղիսեցէ սիրտ իմ զպատգամս [Բան] քո բարիս» [Մաղմ. Դ 2], իսկ Հոգուն՝ Միածին է կոչում. «Ձի ամենեցունց ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութիւն: Ձի գոյ ի մեա Հոգի մտաւոր, սուրբ, միածին» [Իմաստ, է 21-22]: Սա քննով շփոթություն կամ այլալայություն չի ենթադրում՝ եզրակացնել տալով, թե Հայրը երբեմն Որդի է լինում, Որդին՝ Սուրբ Հոգի, Սուրբ Հոգին էլ՝ Հայր, եւ հակառակը. «մերժիր այսպիսի կարծիքները», քանի որ թեւ Սուրբ Երրորդությունը մեկ քնություն եւ էություն ունի, սակայն Նորա «յուրաքանչյուր անձնավորության ներհատուկն անշարժական եւ անշփոթ է»<sup>19</sup>:

Բ. Եւ երկրորդ պատճառն այն է, որ տվյալ էկեղեցական հայրերը իրենց աշխատություններում երբ որ մասնակիորեն անդրադառնում են առանձնավորական հատկություններին, ամենայն ճշգրտությամբ են կիրառում խնդրո առարկա եզրերը: Եվ միայն սրանից հետո, կամխալ համոզված լինելով այդ հարցի շուրջ ըմբռնողի մախնական պատկերացում ունենալու մասին, Եկեղեցու հայրերը դիմում են, այսպես կոչված, «եզրաբանական ազատությանը»:

Միայն այս ենթահողի վրա կարելի է հասկանալ Ներսես Լամբրոնացուն, որն իր տարրեր գործերում հստակ եւ որոշյալ կերպով Սուրբ Հոգու առանձնավորական հատկությունը՝ քննումը ներկայացնելով հանդերձ, Համգամակի մեկնության մեջ գրում է. «Եթէ յառաջ խաղալ եւ եթէ բղիսել եւ եթէ ելանել ոք աւիցէ, ի ճշմարտութենէն ոչ սխալէ»:

Այսպես, աստվածաբանական պրակտիկայում Հորից Որդու առաջանալը արտահայտվում է հետեւյալ եզրերով՝ *προβολή*, *prolatio*, *processio*, *derivatio*, *ἐκπόρευσις*, *signatura*, ինչպես մառի *προσηγορία*, *ἐκλέμψιν*, *ἀναλέμψιν* քայերով: Իսկ Սուրբ Հոգու առնչությամբ ընդհանրապես տրվել են հետեւյալ եզրերը՝ *προβόλος*, *προβολή*, *προβλεψα* եւ *προσελθεῖν*, *προϊέναι* քայերը:

կենդանացուցանող եւ նորոգիչ, ոչ ծնունդ, այլ *կրումն*, մույն տեղում, էջ 324. Ստեփանոս Սյունիքի. «Խոստովանիմք ... զՀոգիդ Սուրբ, *կողորմիմի* ի Հայր»:

18 Архимандрит Макарий, "ПРАВОСЛАВНОЕ ДОГМАТИЧЕСКОЕ БОГОСЛОВИЕ", Санкт-Петербург, 1850, том I, стр. 331-333.

19 Տե՛ս Գրիգոր Տառնացի, «ՈՍԿԵՓՈՐԻԿ», Երեւան, 1995, էջ 235-238: